

ՃԵՄԱՐԻՏ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա

Մարդկային հոգիին բնատուր հարստությունը կազմող այլազան սերերու մեջ մեկը կա, որ ամենն զորավորն է և նվիրականը, մայրական սերնն ալ ավելի: Հայրենի հողի սերն է անիկա, հայրենասիրությունը:

Արդարեւ, իրական հայրենասիրը՝ ճգնաժամային պահերու մեջ, գերագույն վտանգի ժամերուն, կմոռնա հայր, մայր, կին, զավակ, ինչք, հարստություն, կմոռնա ինքզինքն ալ, խոյանալու համար թշնամիին վրա, որ կփորձե ռոտնակոխ ընել սրբազան հողը Հայրենիքին և դարերու վաստակով անոր վրա կանգնած ազգային սրբություններ:

Հայրենասիրության այդ զգացումը, որ ո՛չ իսկ ձեւավորված է մանուկ հասակի մեջ, պատանության հետ կծի և իր պոռթկումին կհասնի երիտասարդության մեջ:

Երիտասարդ զինվորներ ի՞նչ հանդգնություններ հանձն կառնեն, մահվան հետ գիտակցորեն ճակատ բռնած, ի սեր Հայրենիքին:

Վերջին պատերազմի վեց տարվան պատմությունը թղթատող մը պիտի գտնե հազարավոր տիպարները մահը անգոսնող այդ հանդգնություններու, խրամներու ծոցը, օդերու մեջ, կամ ծովերու խորը:

Հապա՞ շարքը իմացյալ մահը գրկող այն հերոսներուն, որոնք բանակներու թիկունքը, ընդերկրյա խուլ մարտնչումներու մեջ անհետացան:

Խորհրդային Միության, Չեխոսլովակիո, Յուգոսլավիո, նույնիսկ Ֆրանսայի պարտիզանական կռիվները լի են անհավատալի հերոսության գրվազներովը հայրենասեր մեծ նվիրյալներու, որոնք կոչված են դառնալու խաղաղության մեջ հասակ առնող ապագա սերունդներու հարգանքին ու պաշտումին առարկա նոր օրերու փրկիչներ:

Բ

Փոքր ենք իբրեւ ազգ, բայց արության մեծ գործեր ունեցած ենք մենք ալ ամեն դարու մեջ: Ալեմորուս Խորենացին է հայրը այդ վկայության:

Ափսո՛ս որ օտար լուծեր, մեր լավագույն հատկություններն ումանց հետ, բան մը առած են նաև մեր հայրենասիրության տաք զգացումն: Օտար հողերու վրա ապրումը մեզ դարե դար ըրած է ավելի ինքնասեր ու շահախնդիր և ցեղային հասարակաց հատկություն մը, անխարդախ հայրենասիրությունը, դարձած է քիչերու բաժին մնացած շնորհ:

Պատմությունը անկաշառ դատավորն է ազգերու լավ ու հոռի արժենիչներուն: Այսպես, ան կվկայե, թե դարերով Հայրենի հողն զրկված ազգեր չեն կրնար հայրենասիրությամբ հավասարիլ անոնց, որ սերունդն սերունդ ապրած և ուռճացած են Հայրենի հողի դիեցումին տակ:

Անցյալ փառքի օրրան մեր մայրաքաղաքներեն, հայ արվեստի դարավոր կոթողներեն, ու քարերու բերնով անցյալ մեր փառքը պատգամող հուշարձաններեն, մեր վանքերեն ու ավերակներեն հեռացած, օտար հողերու վրա սփռված հայերս կարելի չէ որ ըլլանք այնքան հարազատորեն հայրենասեր, որքան անոնք, որ կխմեն ջուրը հայրենաբուխ գետակներու, կդիտեն վեհատեսիլ գագաթները հայրենի ալեփառ լեռներու, կհամբուրեն քարն ու խորանը դարավոր վանքերու և եկեղեցիներու, և կլսեն զույցներն ու երգերը հայրենասուն քաջերու:

Շապուհի պալատին մեջ, Հայրենի հողին վրա առլուծ դարձող Արշակի մասին Փավըստոսով մեզի հասած սիրուն գրվագ մը ունինք մեր դյուցազնական անցյալին:

Որքան խոսուն է այդ անկասկածաբար, և գերազանցորեն հուզող ու խանդավառող:

Հայրենի հողը... Ա՛ն միայն կրնա ջամբել կենսատու ավիշը ազգային գիտակցութեան և խնկական հայրենասիրութեան:

Դրե՛ք ափ մը Հայրենի հող գաղթաշխարհի հայության ոտքերուն տակ, և պիտի կըրկենք ի հրաշքը Արշակին. ամեն հայ պիտի դառնա առուծ, շնորհիվ ազնվական այն արյունին, որ, հակառակ դարերու մահացնող ներարկումներուն, կրցած է պահպանվիլ շունշովը ազգայնացած մեր Եկեղեցիին և մեսրոպատուր մեր գրականութեան:

Եվ ահա՛ կըրվի այն ափ մը հողը մեր ոտքերուն տակ, շնորհիվ Խորհրդային Հայաստանի, ուրկե նշխարահասփյուռ հայության կհասնի հրավերը ներգաղթի:

Ներգաղթ դեպի Հայրենիք... Օտար անավիշ հողերե մեզ փրկելու կոչված հրավերն է ան, որ այնքան խոր խնդրություն արձագանքեց բոլորիս հոգիներեն ներս:

Գ

Այդ արձագանքումը, ամենագու թնդունով, դու՛ք ալ պիտի զգաք անտարակույս, սիրելի՛ օրիորդներ և պարոններ, դու՛ք, որ ձեր պատանեկության հասակին հրաժեշտ տալու վրա եք արդեն և հզորապես պիտի կրնաք ներշնչվիլ Հայրենիքի կանչով:

Պատմության ձեր դասերուն ընթացքին շատ բաներ եք լսած հայրենասիրության մասին, և հուզող ու խանդավառ շատ տիպարներու հանդիպած: Ձեր հիացումը բնական է, որ երթա ամենն առաջ՝ Հայրենիքի ազատության և Հայրենի հողերու պաշտպանության նվիրված քաջերու և զորավարներու: Իրավունք ունիք. ձեր տարիքի նախապիտուկները հերոսներուն կերթա. ձեր մատաղ հոգիներուն տեսլական կուռքերն են անոնք:

Վաղը, երբ քարավաններն հետևին իրարու և դու՛ք ալ բախտը ունենաք ձեր ոտքերուն տակ զգալու ջերմությունը Հայրենի հողին, եղբք նմանողները անոնց և արժեքավոր դավակները հին ու նոր օրերու մեր հերոսներուն և հերոսուհիներուն:

Սակայն, մի՛ փորձվիք հայրենասիրությունը որոնելու միայն կովի և մարտնչումի, զինվորացյալ հերոսացումի մեջ: Ծըշմարիտ հայրենասերներ չե՛ն միթե անոնք, որ բրիչով Հայրենի հողի աչքերը կբանան, գրիչով հայրենի հանճարը կփառավորեն, երգով, ներկով, քարով, մարմարով հայրենի փառքը կպանծացնեն, կբանդակեն, կկանգնեն, գետեր կզսպեն, ջուրեր կբաշխեն:

Եւներ կծակեն, ամայություններ կշենցընեն, Հայրենիք կկերտեն, կուսանին, կուսուցանեն, կերկնեն, կարտադրեն...:

Միևնույն ատեն, զգո՛ւյշ եղբք, որ ձեր հոգիներեն ներս ճարակ չգտնե սխալ հայրենասիրություն մը, որ մեզմե շատերունը եղած է և կշարունակե ըլլալ գաղթաշխարհի մեջ. քանի որ, նո՛ւյն նախահոր դավակներ, նո՛ւյն Հայրենիքի ժառանգորդներ, կիրքերն մոլեգնած և նեղմտությամբ կուրացած, նո՛ւյն Հայրենիքի անունով հաճախ զիրար կնսեմացնենք, զիրար կմրոտենք, զիրար կհոշոտենք նույնիսկ, ծնունդ տալով ատելության զգացումի մը, անհանդուրժողության մը, որ թշնամի բանակներու միայն պիտի ըլլար վայել:

Նեղաթյուրված հայրենասիրություն մը, զոր շահագործումի ապրանք դարձնելն չեն վարանիր անոնք:

Եթե կընդունիք, որ Հայրենիքը սրբություն մըն է, ապա ուրեմն այդ սրբության անունով սնուցված ատելության և անհանդուրժողության զգացումները ձեզ համար թո՛ղ ըլլան խոտելի և աններելի:

Դու՛ք, ներգաղթի այս պատմական օրերու բախտավոր շրջանավարտներ, դու՛ք մի՛ փորձվիք մաս կազմելու հոսանքին անոնց, որ սեր կհավակնին տածել Հայրենիքի հանդեպ և ատելության կիրք կտեղան անոր անունով:

Կրնան գտնվիլ կույրեր, մոլորածներ ու վաճառվածներ: Իրական հայրենասիրությունը, ա՛յն հայրենասիրությունը, որ նվիրում միայն կճանչնա և զոհաբերություն, պիտի հանդուրժե նույնիսկ անոնց, քանի որ ժամանակն է գերագույն դատող և հաշիվներ հարդարող:

Սիրելի՛ պարոններ և օրիորդներ, թո՛ղ ձեր հոգիներուն սնունդը զա հայրենական մաքուր ակներե, որպեսզի աճիք ու զորանաք Հայրենի հողի վրա և դառնաք բեղմնավոր ու պտղալի մասնիկները անոր:

Ներգաղթի այս տարվան և Բյուրեքի քարափեն ճամբա ելլող առաջին քարավանի պատմական այս օրվան պատգամը ա՛յդ թող ըլլա ձեզի, այն հաստատության անունով, որ ձեզի ջանաց ներշնչել իրական ու անխարդախ հայրենասիրության զգացումը:

Գացե՛ք, միացե՛ք անոնց, որ Հայրենի հողի վրա մեր նոր օրերու պատմությունը կկերտեն:

Այս օտար հողերու վրա ձեր թափելիք սերմերը կրնան ամուլության դատապարտվիլ, և համեստ ապրումի մը ձգտող ձեր ճիգերն

ու ոգորումները կրնան ատող մոլեռանդություններու բախիլ, քանի որ Հայրենի հողի կենսատու ուժը պիտի պակսի այստեղ, ձեր ոտքերուն տակ:

Գացե՛ք, հո՛ն, ուր կա այդ հողը նվիրական, և ուրկե իրենց սնունդը ստացած են հին դարերու և նոր օրերու մեր տիտանները:

Անհարազատ այս հողերու վրա, նոր սերունդի ազգային ոգիով դաստիարակման համար հիմնված այս հաստատությունն ու անոր տարեց ու կրտսեր բոլոր աշխատավորներուն մաղթանքը ա՛յս պիտի ըլլա ձեզի համար:

Երթա՛յք բարյալ:

Մեզի նման, օտար հողերու բաժին չըլլա ձեր երիտասարդությունը:

Հայրենիքը ձեզմով և դուք Հայրենիքով ապրեցե՛ք հպարտ, աճեցե՛ք ուրախ, եղե՛ք երջանիկ:

Ձեր և ձեզմով հառաջ գալիք սերունդներու այդ երջանիկ ու բարգավաճ ապրումին մեջ, հոգեկան գերերջանիկ ապրումի մը վայելքը պիտի զգանք նաև մենք:

Երթա՛յք բարյալ:

Ձեր ճամբան բաց ըլլա և ձեր ամողերը պայծառ:

23 հունիս 1946

(«ԿՅԱՆՔԻ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ՄԸ ՍԵՄԻՆ», Հալեպ, 1950 թ., էջ 71—75)

